Թիվ 1405/10
06.07.09թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
պարոն Արթուր Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Ղեկավարվելով «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգի 4/04-ի 23-րդ գլխի (բաժնետոմսերի և պարտատոմսերի համար) պահանջներով, որպես հաշվետու թողարկող, Ձեզ ենք ներկայացնում էական փաստերը և տեղեկությունները ներառող փաստաթուղթը:

Առդիր՝ 2 (երկու) թերթ:

Հարգանքով՝

Ա. Օսիպյան

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 8, 04.02.09թ.


| | |
|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,072,401 հատ, 40,000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեք (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ |

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| Գարիկ Ադամյան<br>(անուն, ազգանուն) | Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ<br>(պաշտոն) | (ստորագրություն) | 06.07.09թ.<br>(ամսաթիվ) |
| Արթուր Մելիքյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 06.07.09թ. |
| Տիգրան Գալստյան<br>(անուն, ազգանուն) | Գլխավոր հաշվապահ-վարչության անդամ<br>(պաշտոն) | (ստորագրություն) | 06.07.09թ.<br>(ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան<br>(անուն, ազգանուն) | Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն<br>(պաշտոն) | (ստորագրություն) | 06.07.09թ.<br>(ամսաթիվ) |

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
АРАРАТБАНК
ARARATBANK
02500513

06 հուլիսի 2009 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

«03» 07 2009 թ. Թիվ 1/868Ա

Երևան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի 75-րդ և 84-րդ կանոնները, «ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության» հանձնաժողովի (01.07.2009թ. արձանագրություն թիվ 27) եզրակացությունը և հաշվի առնելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 15.06.2009թ. թիվ 1252/2 միջնորդագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գրանցումից հանել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխավոր հաշվապահ-վարչության անդամի պաշտոնում գրանցված Գայանե Մարգարյանին:
2. Գայանե Մարգարյանին գրանցել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնում:
3. Տիգրան Գալստյանին գրանցել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխավոր հաշվապահ-վարչության անդամի պաշտոնում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ